Խոտակերաց Ս. Նշանի.* իսկ աւետարաններից վերոյիշեալից զատ՝ ունինք Երուս. No. 2566, ոսկերչական գեղեցիկ գործերից մէկը** եւ Ն. Նախիջեւանի մի աւետարանը, որ կը տեսնենք քիչ յետոյ:

Աւետարանի բազմաթիւ յիշատակարան-



Պատկ. 12.— Ձեռ. Երուս. No. 1956, 11բ., 1265 Թուի

ները, մեծ ու փոքր, տալիս են մեզ մանրամասնութիւններ նորա ծագման եւ յարակից հանգամանքների մասին: Կոստանդին Կաթուղիկոսի դրան սարկաւագ Ստեփանոս եպիսկոպոս, հետեւելով իւր հոգեւոր տիրոջ օրինակին, հրամայում է Կիւրակոս գրչին «գրել զսբ եւ զլուսաւոր մատեանս կենարարին մերոյ յի քի բազմածախս յաւրինուածովք յոսկւոյ եւ ի պատուական երանդոց զեղազարդել զսա ներքոյ եւ արտաքոյ»: Գրչութեան տեղն է «աշխարհամուտ զղեակս Հռոմկլայ», «ի հայրապետութեան տն Կոստանդեա կաթուղիկոսի, որոյ հրամանաւ գրեցաւ սբ աւետարանս»: Գրչութեան ժամանակն է Հայոց ՈՂԷ (=1248) թուականը. «եւ էր թագաւոր Հայոց քսանպակն Հեթում,

*Մեր Խաղբակեանք եւն. Ա. գլուխ Ը., եր. 190–200:

**Մեր մի էջ Հայ արուեստի եւ մշակոյթի պատմութիւնից. Հալէպ. մատենադարան «Տաքեւ»-ի թիւ 1: